

Armin T. Wegner's article to "Najiri" with pictures from his own collection.

Wegner, 50 years ago

THE ZORYAN INSTITUTE

Ն Ա Յ Ի Ր Ի


Wegner, at present 3



Վեյցները՝ 50 տարի առաջ

Հ Ա Յ Մ Շ

Սիրելի խոսքի մը
Dr. ARMIN T. WEGNER
104, Viale Quattro Venti,
Roma (Monteverde)



Վեյցները՝ ներկայիս

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԵՏՔ...

ԳՐԵՑ՝ ԱՐՄԻՆ Թ. ՎԵԿՆԵՐ

Աւելի գեղեցիկ խորհուրդ մը կրնա՞յ ըլլալ ժողովուրդի մը եամար, Կան Արարատը, ի սկզբանէ խորհրդանիւր Հայաստանին:

ԲԱՐԻ ՀԱՅՍ:

Ասանք են այն բաները, որոնցմով աշխարհի հնագոյն ժողովուրդներէն մէկը, Հայերը զիրար կը բարեւեն: Մեր երկրի բնակիչներէն շատերը, երբ իրարու հանդիպին, «բարի որք կը մտայթեն»: Հայերը՝ յոյսը կը փաստարանեն անոր համար, որ իրենց յեաներու բարձրութեան վրայ եօթը ամիս տեսող ստեղծած ձմեռ մը կ'անցընեն: Այն միայն յոյս կը բերէ արեւը, որ զիշերուան ազնամուղջէն ետք ամէն ինչ տեսանելի եւ բարախան կ'ընէ, այլ անոր մէջ կայ նաեւ իմաստութիւն եւ հուշարար: Կոյսը սուրբ է: Սուտի նախ թոյլ սուէք փաստարանել անոր փայլը, եւ սուտ յիշատակել այն զժրախատութիւնները եւ հարածանքները որոնց ենթարկուեցաք զէպի անապատ ձեր գաղթի ընթացքին, եւ որոնց անգոր վիան կ'ույլ եւ: Կոյսը ունի նաեւ խորհուրդը յարսութեան, բայց ոչ միայն ըստ քրիստոնէական հաւատքին, որուն տառջին հեռուագներէն կ'ույլ երկրի վրայ: Կոյսին կը պարտինք մշտական վերածնունդը այն անխնայ բայց նայն առնն ցաւազինարէն սիրելի աշխարհին վերադարձող ամէն կեանքի՝ որ օրհնեալ է յոյսով:

Սիրելի բարեկամներ, երբ հրաւիրեցիք զիս այս գարնան անգամ մը եւս վերջիչէլ Հայաստանը, նախ այնպէս թուեցաւ ինձի, որ իմ սեփական երկրիս եւ ժողովուրդիս կրամ տանջանքները, զերսթիւնս, կարուսար հայրենիքիս եւ ընտանի-

քիս, ինչպէս նաեւ երկար տարիներու աքսորը, — այդ բոլորը իմ մէջ կրնային թողած ըլլալ ամէն ինչ: Բայց հազիւ սկսած էի խորհիլ, եւ ահա, սարսափի տեսարանները որոնց տկանատես կ'ըսէի, վերստին յայտնուեցան զիտակցութեանս մէջ: Ասանք պարզապէս եւս միտած էին միայն, բայց պահուած կը մնային կաթեանս մէջ, որպէս ցաւազին բայց նայն առնն անկորնչելի գանձ մը:

Ահաւասիկ ամանային տառջին օրերը ձեր լեաներուն վրայ, երբ բնագաղթի հրամանը եկաւ «երիտասարդ Թուրքերու» իշխանութեան, ձեզ ընդժիշտ հեռացնելու ձեր բնակավայրերէն, ուր ձեր ժողովուրդը հաստատուած կը աւելի քան երկու հազարամեակներ: Թրքական գաղթիչներու եւ զինուորներու հակադրութեան տակ, տարադիրներու խանամփոխ կարուսաններ կ'առաջանային զէպի հարաւ: Յուսահատութիւնը զրոյշուած կը բոյսը զէմքերուն: Հոպի քանի մը զիւզացիներ կրցած էին կ'ան սայլեր ունենայ, ձամբու մէկ մասին համար: Զարմանայի կատրեր էին, նման անոնց՝ որ կը գործածուէին ժողովուրդին պատմութեան հնագոյն շրջաններուն, եւ աւանդութեան հանգեղ ձեր սէրն էր լսի, որ հասցուցած կը գանձը մինչեւ այդ օրը: Իրենց փայտէ առանցքներուն շարք ձանձերով գործող այդ սայլերուն միակատր եւ գանդուածեղ անիւները, մեղմամտազ շեշտ մը տնէին, որ հայ շինականին կը թուէր հայրենական մեղեղի մը, բայց որ, զէպի թշուառութիւն տանող այս ձամբուն վրայ, կը վերածուէր սղորակին մահերգի մը: — «Տքնի՛ր, աքնի՛ր, կը գոչէին անիւները: Աշխատանք, սէր, մահ: Ինչքան գեղեցիկ է կեանքը, եւ ինչու պէտք չէ երջանիկ ըլլալ: Վաթե՛ն, Հայրենի՛ք: Միշտ տանջուիլ եւ մեռնիլ քեզի համար, սուրբ Հայաստան»:

Երբ կարուսանը անցած էր եւ փոշի ամպը ցրուած, կը տեսնէիր ձամբուն կերբքը տապալակող երեխաներ, որոնք հայ մայրեր ձգած էին հոն, օրեր շարունակ քաշիչ եւ սպասելի կար, շալիկու ո՛վ անկարող, եւ յուսալով, որ թերեւս գթոս թուրք մայրեր հոգան գանձը: Ծարք մը երեխաներ ազատեցան այս ձեւով, բայց իրբեւ սոսկական թուրքեր մեծցան, եւ իրենց ծագումին յաւէտ անտեղեակ մնացին:

Վեց ամիս ետք, գերման հրամանատար Ժոն ակը Կոյցի ստրայտիչային որպէս անգամ, օսմանեան բանակի մէկ մասին հեռ Պոլսէն ուղարկուեցանք զէպի Պապասա՝ Գանիայի, Տարսուսի, Հալէպի, Ռաս Իւլ Այնի եւ Մուսուլի վրայով: Ամէն անգամ որ առիթ ներկայանար, զաղարի մը ընթացքին, կը հեռանայի մեր թուրք եւ գերմանացի ուղեկիցներու շրջանակէն,




Ճարտարներու յոյսը եամբաներուն վրայ իր գանձն կերպարանէին սարսափ տարածող յուրբ տարիկանց, իմեացան եւ կ'ուրարձ՝ սիրտաւայտ արագքիւն, որ կ'անպէս իսկ կ'արտաշնէ իր վառ գերին եւ յարաւում անին վայրենական քրքուրիներ: Լուսակար՝ Արմին Թ. Վեյցները կառնածայէն, ինչպէս իր յոյսամբն ընկերացող միւս պատկերները:

կը դիմէի մտակայ հայ տարագիրներու քեմփերը եւ կը ջանայի գտնուողի գիրքներ, բայց քիչ մը զեղեր բաժնելէ ուրիշ բան չէի կրնար բնել:

Հալէպի մօտ, բժաւօր տնոցի զոհ հարիւրաւոր այրեր, կիներ եւ երեխաներ կը ծածկէին առեւտրական այդ մեծ ստանին գաշտերը: Այս այն քաղաքն է, որուն կուսակալը հեռագրեց Պոլիս, ներքին գործոց նախարար Թալաթ փաշային. — «Հայ տարագիրներու կարաւանները Հալէպ հասան: Ի՞նչ զէտք է բնել»: Թալաթ պատասխանեց. — «Տեղահանութեան նպատակը ոչնչացումն է»:

Քանի մը որ ետք, գերման հրամանատարի սպայակոյտին հետ, որ կը բաղկանար տասնեակ մը գերման սպաներէ եւ վարչական պաշտօնականերէ, շարունակեցի ճամբաս դէպի Մուսուլ: Անապատի մուտքին, ջրառատ Ռաս խլ Այնի մէջ, արշալոյսին, տեսայ հայ տարագիրներու մեծ կարաւան մը, որ յիշողութեանս մէջ մնացած է սրպէս ամէնէն տխուր եւ թշուառ տեսարանը, որուն երբեքից հանդիպած ըլլամ: Ոչ մեռել եւ ոչ ալ մահամերձ տեսայ այնտեղ: Մէկ մասը քիչ մը դրամ ունէր դեռ, մէկ մասն ալ քիչ մը ուտելիք՝ սրպէս պաշար մահուան ճանապարհի: Քեմփին եղերքը նստած էին 7էն 10 տարեկան խուճր մը մանուկներ, որոնք ճամբու ընթացքին կորսուցուցած էին իրենց ծնողները, քիւրտերէն սպաննուած, կամ ուժասպառութենէ մահացած: Անապատի գիշերային ցուրտէն ստուած ու զտղտղուն, կողք կողքի կձկաւած էին անոնք եւ կուլային ու կ'ողորային, բարձրաձայն աղաղակելով: Չափահասներէն ոչ ոք կը հետաքրքրուէր այս փոքրիկներով, սրովհետեւ ամէն մարդ հազիւ իրեններով կրնար դրողիլ: Ոչ ոք ուշադրութիւն կը դարձնէր այս սրբերուն: Գերմանները կը զգուշանային տարագիրներու քեմփերը մտնելէ, վախճալով տարախախտիկ հիւանդութիւններէ, եւ կամ թուրքերուն աչքին կասկածելի չերեւալու համար, սրովհետեւ հայերուն վիճակով հետաքրքրուող ամէն անձ կասկածանքով կը դիտուէր անոնց կողմէ: Անձնական վասնզր անասելով, եւ միշտ անոնց հետքերուն կը հետեւէի, առանց սակայն մեծ բան մը կարենալ ը-




«Հալէպի մօտ, հարիւրաւոր այրեր, կիներ եւ երեխաներ...»



«Ոչ ոք կը հետաքրքրուէր սրբերով... Ամէն ոք իրենցը ունէր...»



«Որքո՞ւ շարունակ խալիկ ետք, շայկիտ ա'լ անխաղ...»



«Թերեւս բուրձ գրաս մայրեր եզգալ զանոնք...»

նելու: Անմխիթար կ'արատաւէի անոնց ցաւերուն եւ տանջանքներուն վրայ, ամօթով կը հեռանայի այդ վայրերէն, ներքնապէս անիծելով մարդկային բրտութիւնը եւ անգթութիւնը: Ե յիշատակ այդ անմեղ արարածներուն, պատերազմէն ետք ծնած իմ աղջիկս մկրտեցի հայկական գեղեցիկ «Անոյ» անունով:

Երբ հասած էինք Տիգրիսի ափերուն, այդ օրերը, սպասեցաւ հետեւեալ զէպքը: Առաջ մը հայ աղջիկներ եւ կիներ հաւաքուեցան բարձրագիր գետեզերքի մէկ ցցուածքին վրայ: Արպէսզի վերջին պահուն իրենցմէ մէկը փրկուելու փորձ մը չընէ, ամէն մէկը իր դաստակը կապեց քովը կեցողին, եւ այդ ձևով անբահակի շղթայ մը կազմեցին: Այսպէս, իրարու կապուած, սկսան երգելով օրօրուիլ, եւ իրենց զոհարելութեան արրեցումէն վերացած, հաւաքարար գետը նետուեցան, գահակէտ:

Իրենց բարձր պատուախնդրութեամբ, յանդգնութեամբ՝ որ կը յիշեցնէր վեհութիւնը հին զարերուն ուր մարդիկ մեռնիլ գիտէին՝ անոնք նախընտրեցին հեռանալ այս աշխարհէն, քան թէ խոչանդուիլ, կամ երկարատեւ հիւժումէ ետք անպատի սովալլուկ շագալներուն կեր գանալով ոչնչանալ:

Տարի մը ետք, ծանր հիւանդութենէ մը դեռ նոր ելած, հինգ բնիկներու հետ, դարձեալ Եփրատի եզերքէն եւ Հալէպի վրայով Պոլիս կը դառնայի, հին կառքով մը: Տասնեակ հազարաւոր տարագիրներէն, որոնք երթի ճամբուս վրայ քեմփերու մէջ խնուած տեսած էի, քանի մը հարիւրներ միայն մնացած էին: Անապատին մէջ՝ գիտէիներ եւ գանկեր: Երբ, գիշերելու համար կանդ առնէինք օթեւաններուն առջեւ, ստիպուած էինք նախ մուտքերուն ինկած եւ շորցած տարագիրներու կմախքները հեռացնել:

Մեր վերջին կայանին, Եփրատի եզերքը Մեւքենէ, անապատէն դուրս գալէ առաջ, երկար ժամեր մնացինք: Չարմանքով գիտեցի վերապրողներուն յամառութիւնը, իրենց նոր կեանքը կազմակերպելու: Ոմանք ճամբայ ելլելէ առաջ յաջողած էին քանի մը օսմանեան ոսկի պահել, կլլելով, ու յետոյ իրենց ազախն հետ դուրս հանած: Ուրիշներ, ուտեստեղէնի



«Բաժանայ մըն էի... երեսուցիկի Բաժանանի քաղցի...»

առեւտարի սկսած էին, զեւինը բացուած խոռոչներ օդապարծելով: Քեմփի հսկիչ թուրք զինուորները ամերիկացի միսիօնարներուն նուիրած քիչ մը ալիւրը կը բաժնէին: Քեմփին կեղքներ նստած էր թշուառ կին մը, աւսածներէն խերպար: Բաժնոց զինուորը ալիւրը կը գնէր անոր արկերուն մէջ, խկ կէր, անտարրեր, թոյլ կու տար որ մատներուն արանքէն զեւին թափի: յետոյ, ալիւրը աւազին կը խոտնէր եւ մատներով կը խաղար:

Քաճանայ մը ինձի պատմեց որ անապատին մէջ երբ հարիւրաւոր մահացած տարագիրներ կը թողէր, թաղած էր նաեւ երեսուցիկի քաճանաներ: Ըստ, մարտի ֆրանսերէնով.

— Autrefois j'étais un prêtre; maintenant je suis un mouton qui va à la mort(*)

Նոյն քաճանան ինձի յանձնեց խնդրողի նամակներ սուղուած Ամերիկայի ազգականներուն: Մարմինիս վրայ, գօտիս տակ պահած Պոլիս տարի եւ յանձնեցի ամերիկեան զեւպանատներ, Ամերիկայի պատերազմ մտնելէն քանի մը շաբաթ առաջ: Աներեւակայելի եւ նոյն տակն զարմանալի էին ճակատագիրները այս տարագիրներուն: Երբտասարգ մը, որ յաջողած էր անապատին մէջ վերապրիլ արարի մը հօտին հօփի գառնարով, պատերազմէն ետք, Հայկոյ, հանրատուն մը գնաց: Երբ ազջիկին կը մօտենար, ուշադրութիւնը գրաւեց անոր թեկն տակ ինկած խալը: Սկստ հարցութործել եւ սարսափով հաստատեց թէ իր հարազատ քոյրն է...

Սիրելի բարեկամներ,

Հիմա, յիսուն տարիներ անցած են այն օրերէն ի վեր: Այլեւս ձերացած եմ, եւ թերեւս վերջին անգամ բլլալով կը ոգեկոչեմ ձեր գոհերուն ուրաւականները, մինչեւ որ ես ոչ երթամ միանալ անոնց սատերներուն: Յիսնամեակի այս տարիլիցի օրերուն, չեմ ուզեր խօսիլ հայ ժողովուրդի միայն սուղին եւ զժբարխաութեան մասին, երբ այլեւս վերազանուած է

(*) Ֆրանսերէնով՝ քնազրիմ մէջ.— «Անցեալին, Բաժանայ մըն էի եւ... հիմա ոչխար մըն եմ որ կ'երբայ դէպի մահ»:


խաղաղութիւնը, կեանքը վերազարծած իր բնականոն հունին: Փոքր Ասիոյ բարձրագոյն լեռան, Արարատի բարձունքին, ինչպէս կը պատմէ չին աւանդութիւնը, կանգ առաւ Նոյն Նահապետի տապանը, Ջրհեղեղէն ետք: Իմանալու համար թէ երկիրը ցամբած է թէ ոչ, Նոյն Նահապետ տղանի մը ուղարկեց որ վերազարծաւ խաղաղութեան ձիթենիի ճիւղ մը կտուցին: Ասելի գեղեցիկ խորհուրդ մը կրնամ ըլլալ ժողովուրդի մը համար, քան Արարատը, ի սկզբանէ խորհրդանիշը Հայաստանին:

Արարատի կատարէն ամբողջ աշխարհի վրայ կը ճառագայթէ այն Բարի Լոյսը, որուն մասին խօսեցայ: Հայերը դարձեալ ունին իրենց սեփական երկիրը ուր իրենց լեզուով կրնան խօսիլ: Թէեւ ժողովուրդին միւս կէտը, բնագաղթի ճակատագրով հեռացած Հայրենի բնաշխարհէն եւ լեռներէն, ցրուած կը մնայ ի սփռուս աշխարհի, բայց անոնք եւս իրենց ճարտարութեամբ եւ արուեստով կը ստարեն հայ ժողովուրդի հրշակին, իրենց սպրած երկիրներուն մէջ, որպէս մասուրականներ, արուեստագէտներ, գործի մարդիկ: Այն ճակատագիրը որ թալաթ փաշան սահմանած էր հայերուն, Հայկոյ դրկած հրահանգին մէջ — «Ոչնչացում» — ի վերջոյ դարձաւ ձեր վերականգնումը:

Ճառագայտին մէջ թաքնուած է ահաւելի ուժ մը, որ հաստատեալը կը դարձնէ խոնարհ եւ ճառագայտան, խկ ազատ միտքերը կ'առաջնորդէ կեանքի եւ մահուան անյեղլի օրէնքին զխաակցութեան: Երանի՛ թէ ժողովուրդները ձեր ցաւերուն եւ տառապանքներուն ընդմէջէն դաս առնէին եւ զխաակցէին՝ թէ ի վերջոյ ո՛ւր կրնայ յանգիլ մարդ արարածը նուաւապանը, ինչպէս առաջին անգամ պատահեցաւ հայերուն, այս դարու սկիզբները, եւ որոնց, երկու տասնամեակներ ետք, բախտակից եղան ուրիշ ազգեր, նոյն ճամբուն վրայ: Ով որ իշխանութեան ճարտով եւ անձնատիրութենէ մղուած, մարդոց կեանքը, ազատութիւնը եւ արժանապատուութիւնը կ'արհամարհէ, առով ոչ միայն ուրիշները կը փճացնէ, այլ նաեւ տառապանք եւ ոչնչացում կը բերէ նաեւ ինք իրեն: Մենք բոլորս ալ մեր մէջ կը կրենք վերածնունդի սաղմերն ու արմատները: Կեանքի հը-



«Ի՞նչ տարի վիշտ, տասնեակ հազարներէն Բաժնի մը հարիւրներ մնացած էին...»




«Ներս մտնելու համար ստիպուած էինք մարտի գիտնիքը հեռացնել...»

բաշքն է՝ անխմանալի մեծութեամբ և կատարեալ հաւատքով՝ քանդուածը վերաշինելը:

Ողջունք, որ Հայաստանի գաւառները «բարի լույս» բերելով կու տան, լույսի վերածուած կը ճառագայթէ անոնց ճակատներուն: Խնդութեան ժպիտով սրտասամուտած այդ լույսը, որ մեզրի համ կու սույ իրենց շրթներուն, և սրուն փայլին տակ ցարենը կը ծլի, սրբապատանկին սակի սղիւղները զինին հիւսիս կը քաղցրացնեն:

Սիրելի հայ բարեկամներ, որ շտրճեցիք ինձի ձեր վրասահութիւնը, հաս, օտարութեան մէջ, սկանձ կու տամ զիշերային լուսեան, և ինձի կը թուի՝ ինչպէս Հայաստանի լեռնաշխարհէն գէպի անապատ ձեր գաղթի ճանապարհին՝ թէ կրկին կը լսեմ եզան սայլերու անխնայուն ճոճելներ: Ինչ որ բնէ կ'ազն անոնք, այլևս ոչ թէ արբազին մահերգ մըն է, այլ կեանքին երգը.— «Տքնի՛ր, արնի՛ր, կ'երգեն անխնայներ. կեանք, սէր, երազ, ի՛նչ զեղեցիկ է կեանքը: Վաթման, Հայրենի՛ք, մենք գաղթե՛ք հեռուները, բայց բարի լույսով վերասին կեանքի կոչուեցունք, յախտան կ'ապրինք և կ'աճինք քեզի համար, սո՛ւրբ Հայաստան»:

Համ, Մարտ ամիս, 1965



«Զարմանալի դիտելի վերադարձներու յաճախութիւնը, իրենց կեանքը վերականգնելու...»



Արտաքին մէջ անտէր հայ մանուկներ...



Օտանեան Եւրասիայի իր պարտականութեան կատարումով՝ գործադիր պատասխանող և բռնակ մտնող հայ երիտասարդութեան պատկեր: «Աշխատանքի գործունեացն է ստիկա, եռշախարհ շէնքի թափառելի, որ գործածուելի եւս նորմալիս շինութեան մէջ, ի վերջոյ գնդակաւոր կը լեզնէին փակեր: Այս կըսուած մեծացուեցան տակի էան հարիւր յիսուն հարար հայ երիտասարդներ, 1915ի անտան մինչեւ աշուն:

ՀԱԿԱՊԱՏԿԵՐԸ

Նախորդ էջերով ձեռնարկուած և միարարուած գարնանային տեսարաններու գէտ՝ ինչ խորհեաւա կապակուիր այն մէկը, որ Հայրենիք գրողները իրենց նախաստի գրչի կողայններուն յիշատակին ծառ կը տնկին, և այդ գիծացի էջը, որ Հայաստանի երկու հարկեր հարար աշակերտութեան կը բացատրուի մեծ եղանակն իմաստը, ճիշտ այնպէս, ինչպէս վայել է իր համբաւմէն կէտը անապատին կու տաւած ժողովուրդը մը վերադարձ գաւառաբնակներուն:

«ՆԱՅԻՐԻ»



Այժմ, երբ գարնան շնչով է լցուել հայոց լեռնաշխարհը, արեւադոծ բլուրների վրայ, հարթափայրերում, լեռնային ջերին կարելի է հանդիպել բազմաթիւ մարդկանց, որոնք ստօրեայ աշխատանքից բացի կատարում են նստեցան մի պարտք՝ գալար շիւեր են տնկում հայրենի հողում, որպէս յուրեք անխնայուն լինի կեանքի գոշերի յիշատակը: Այդ առթիւ Հայաստանի գրողների կոչը, որ օրերս հրատարակուեց մամուլում, ջերմ պաշտպանութեան արժանացաւ ամենատակաւները, երիտասարդութիւնը լայնորէն արձագանդեցին այդ կոչին:

Եղևնի գոշերի յիշատակի ծառատունկը առաջինն սկսեցին Երևանի աշխատակները: Այս օրերին բազմամարդ է Գեղարց տանող ճանապարհի Աւան և Առինձ գիւղերի միջև ընկած հատուածը: Այնտեղ, արեւի առատ շողերով ուղղուած բլուրների վրայ արդէն տնկուել են հարարաւոր ծառեր: Ամէն օր աշտեղ ծառատունկի են գալիս մարաբազաքի աշխատակների, ուսանողների, գործողների բարձր գասարանների աշակերտների խմբեր, գրողներ, արուեստագէտներ: Կեանք ու կենդանութիւն է ստացել ճանապարհի ճախ ստին ընկած այն երբեմնի ամալի լանջը: Գնարով աւելանում են տունները՝ շերտ սա շերտ, շարք սա շարք: Գեղամ Մարեանի հետ ծառ է տնկում երիտասարդ ուսանողը: Նա փխրուն հագով ծածկում է մատղաշ ծառի արմատները և հմայում նայում սիրելի բանասեղծին, որ ծառ է տնկում իր աւագ զըրջեղբայրների՝ Գ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռ. Աւետի, Գ. Չաչրայի և միւսների յիշատակին:

Բիշ այն կողմ տանողների մի խումբ շրջապատել է Վարարակ Նորենցին: Նա երիտասարդական կանոնով բաճը միւրձում է շէկ հողի մէջ, շիւեր տնկում, որ անեն, սաղարթախիտ ծառեր գասնան, հոյ անեն մարդկանց և պատեն հայ ժողովրդի տխուր անցեալի ու այս լուս, այս արեւատ օրերի մասին:

Կանցնի մի քանի տարի, Հայաստանի տարրեր շրջաններում այսօր տնկուած հարարաւոր ծառերը կը գտնան կանաչ անառաւերակեր, միշտ կանաչ պահելով անձուտաց գոշերի յիշատակը:

«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԻՔ»